# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության 2012թ. փետրվարի 3-ի նիստի**

Նիստը վարում էր ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ **Կ.Մինասյանը**

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Վահե Չիբուխչյան | Գործարար միջավայրի բարելավման վարչության պետ |
| Արմեն Եգանյան | ՓՄՁ զարգացման վարչության պետ |
| Ժաննա Բաղդասարյան | ՓՄՁ զարգացման վարչություն, գլխավոր մասնագետ |
| Ալիսա Գրիգորյան | ՎԶԵԲ, Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար |
| Սյուզաննա Ծատուրյան | ՎԶԵԲ, խորհրդատու |
| Իզաբելլա Հովհաննիսյան | ՎԶԵԲ, խորհրդատու |
| Գևորգ Պողոսյան | ՎԶԵԲ, խորհրդատու |
| Հակոբ Ավագյան | ՎԶԵԲ, խորհրդատու |
| Վահագն Ղազարյան | ԵԱՀԿ, խորհրդատու |

Օրակարգում՝

1. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի 02.11.2011թ. նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին հաշվետվություն.
2. Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման խորհրդի երկրորդ նիստի հանձնարարականների կատարման հետ կապված հետագա անելիքների որոշում.
3. Ընթացիկ այլ հարցեր

*Քննարկման արդյունքում տրվեցին հետևյալ հանձնարարականները՝*

1. Վերջնական լուծում ներկայացնել հավաքական բեռի փոխադրման կանոնակարգի նախագծի մշակման վերաբերյալ (**Ա. Եգանյան, ժամկետ՝ մեկ շաբաթ**).

2. Գործարար համայնքի հետ քննարկումներ անցկացնելուց հետո համապատասխան առաջարկ ներկայացնել 2000թ. Դեկտեմբերի 27-ի “ՀՀ մաքսային տարածքով ապրանքների և տրանսպորտային միջոցների տարանցիկ փոխադրման ու պարտադիր մաքսային ուղեկցման դեպքերը սահմանելու կարգը հաստատելու մասին”

ՀՀ կառավարության թիվ 887 որոշման վերանայման վերաբերյալ (**Ա. Եգանյան, Վ. Ղազարյան, ժամկետ՝ 10 օր**).

3. Կատարել վերլուծություն և ներկայացնել առաջարկություն այն մասին, թե տնտեսվարող սուբյեկտն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցվելուց և ՀՎՀՀ-ն ստանալուց հետո, ինչպես տեղեկանա, թե որ տարածքային հարկային տեսչությունում է հաշվառվում (**Հ. Ավագյան, Վ. Ղազարյան**).

4. Գործարար համայնքի ներկայացուցիչների հետ քննարկել, թե արդյոք վերջիններս ցանկություն ունեն իրավաբանական անձի ֆիրմային անվանման գրանցման հայտում լրացնելու իրենց հեռախոսահամարները և էլ. հասցեները՝ օրենսդրական փոփոխությունների և սեմինարների մասին տեղյակ լինելու նպատակով (**Հ. Ավագյան**).

5. <<Հարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Հարկային մարմնի կողմից գույքի արգելադրման և արգելանքը վերացնելու) քննարկել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի վարչության պետ Վախթանգ Միրումյանի հետ (**Ի. Հովհաննիսյան**).

6. Ներկայացնել առաջարկություն հաշվապահական կենտրոնի գործունեությունն ակտիվացնելու վերաբերյալ, ինչպես նաև պարզել ներկայում վերջինիս կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ մի շարք տվյալներ՝ հաճախորդների թիվը, ծառայությունների սակագների որոշման կարգը և այլն (**Ա. Եգանյան, 1 շաբաթվա ընթացքում**).

7. Ուսումնասիրել քրեական պատասխանատվության կամ քրեական գործ հարուցելու հարցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը կարող է հանդիսանալ վրիպակ և չառաջացնել մաքսային վճարների նվազեցում: (**Վ. Ղազարյան, փետրվարի 13-ից, 1 շաբաթ**).

8. Ուսումնասիրել ընկերությունների լուծարման գործընթացը և ներկայացնել առաջարկություն ժամկետների հստակեցման վերաբերյալ (**Հ. Ավագյան, Ի. Հովհաննիսյան**).

9. Իրավական ակտերում վատթարացնող նորմերի օրենքով սահմանված ժամկետում ուժի մեջ մտնելու վերաբերյալ քննարկում ՀՀ արդարադատության նախարարության հետ (ՎԶԵԲ, ԳԱԳ)

10. Հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային փաթեթի վատթարացնող նորմերի՝ օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ ուժի մեջ մտնելու վերաբերյալ պաշտոնական պարզաբանման առաջարկ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին՝ Ֆինասների նախարարության աշխատակազմի վարչության պետ Վախթանգ Միրումյանի հետ քննարկումից հետո (**Ի. Հովհաննիսյան, Հ. Ավագյան**):

11. Մշակել 2011 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ ստեղծելու, դրա կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 638-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ, որտեղ կսահմանվի ռոտացիայի դասական կարգ (**Ս. Ծատուրյան**).

12. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 205-ի վերլուծություն և առաջարկությունների ներկայացում (**Ի. Հովհաննիսյան, ժամկետ՝ մարտի 1**).

**Հիշեցում.** Զանգահարել ՀՀ արդարադատության փոխնախարար Ա. Օրբելյանին ԴԱՀԿ ծառայողների կողմից դատարանի պարտապանի գույքը արգելանքի դնելու մասին որոշումը կատարելիս առաջացող խնդիրների վերլուծության և լուծման առաջարկների վերաբերյալ գրության համար **(փետրվար 6, Կ. Մինասյան).**

**Տեղեկացում.** Մինչև Խորհրդի հաջորդ նիստը պատրաստ կլինի էլեկտրոնային ստորագրությունների տրամադրման հետ կապված հարցի լուծումը: Ստորագրությունները կտրամադրվեն անվճար:

Արձանագրեց՝

Լ. Ավենյան